


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի № 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ»-ի 4-րդ կետի դրույթներով ներկայացնում եմ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի վերաբերյալ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի որոշման պատճենը և հայտարարության տեքստը:


Առդիր՝ 2 թերթ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 27
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝



Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

17.04.2019 թ.



ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի ապրիլի 16-ի նիստի թիվ 1 արձանագրությունից:


Օրակարգում. 1 . ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի № 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգը» հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 04.03.2010թ. № 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ հասցեն (ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գարեգին Ա փողոց 6ա) 2019 թվականի հունիսի 11-ին ժամը 14:00-ին
3. Մրցույթի մասնակիցների գործերը ընդունել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 04.05.2019թ.-02.06.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10:00-15:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտին, պետական լիազորված մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 29.04.2019թ.-ին, երկրորդը՝ 04.05.2019թ.-ին:
7. Մրցույթին մասկանցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել կառավարման խորհրդի նախագահ՝ Ա. Մարգարյանի վրա:
8. Սույն որոշման 4-րդ, 5-րդ, և 6-րդ կետերի պահանջների կատարումը վերապահել կառավարման խորհրդի նախագահին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 27 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
 ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
 ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝


 Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ